ԱՐԱՄ ՀԱՄԲԱՐՅԱՆ

# ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ Բ.ԴԻԼՈՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## /քննական տեսություն հիշատակի ցուցահանդեսի աշխատանքներից /

Քանդակագործի ցուցահանդեսը կայանում է այն ժամանակ, երբ նրա ստեղծագործությունների գոնե մի մասը դառնում է քաղաքի խորհրդանիշ, ուրույն դեմք կամ զարդ հանդիսացող հուշակոթող: Այս առումով Բորիս Դիլոյանը վաղուց ի վեր կերտել է տասնյակից ավելի աշխատանքներ, որոնք իրենց տեղն են գտել Վանաձորի արտաքին տեսքում, կազմելով նրա ինքնատիպ գեղարվեստական պատկերը: Դրանց թվում կան մոնումենտալ հուշարձաններ, բոլորաքանդակներ, ռելիեֆներ, ֆրիզներ:

Դեռևս խորհրդային տարիներից Բ. Դիլոյան քանդակագործը Վանաձորում ճանաչում էր վայելում: Բոլորին են հայտնի նրա կերտած Վանաձորի «Ավտոգենմաշ» գործարանի գլխավոր մուտքը զարդարող հոյաշուք, հաղթանդամ ու առնական բանվորի պղնձածույլ արձանը և նույն մուտքի ճակատին՝ բազմաֆիգուր, դեկորատիվ լուծումներով կատարված ֆրիզային շարքը: Դրանք համարվում են Վանաձորում երբևէ կանգնեցված լավագույն քանդակներից: Նույնը վերաբերում է Վանաձորի Երևանյան խճուղու «Ավտոմատիկա» գործարանի գլխավոր մասնաշենքի ճակատային հատվածում տեղադրված «Տիեզերք» ֆիգուրատիվ կոմպոզիցիային: Սրանք Դիլոյանի այն գործերն են, որոնցից յուրաքանչյուրն ինքնին մի ցուցահանդես է «բաց երկնքի տակ»: Իսկ «Փակ երկնքի տակ» ցուցահանդեսը, կամերային ստեղծագործություններով մեզ է բացվում Վանաձորի Պետական թանգարանի շքադռներից այն կողմ՝ 2004թ. բացված ցուցասրահում: Ճեմելով ցուցասրահով, մենք տեսնում ենք այն ստեղծագործությունների մասունքների, որոնք փլատակներից հավաքել ու խնամքով պահպանել է Ա. Ղարիբյանը, հնարավորություն ընձեռելով հաղորդակից դառնալու դիլոյանական քանդակագործությանը, մի պահ ապրելու նրա հույզերով ու աշխարհի մասին ունեցած ուրույն պատկերացումներով:

Դահլիճի կենտրոնական մասերում՝ ճակատային պատի ներքո տեղադրված է Դիլոյանի «Աղջկա դիմաքանդակը»: Ոչ մեծ չափսերի այս աշխատանքը իր մեջ է կրում Դիլոյանի ողջ ստեղծագործությունների միասնական

բնութագիրը, դառնալով հեղինակի ապրած 60 տարվա բազմաբեղուն ստեղծագործական կյանքի պատկեր – հաշվետվություն: Այն կնոջ կերպարանք ստացած, մետաղե թափոններից հավաքված ու մի խուրձ մետաղալարերով էլեկտրազոդված երկաթե մի զանգված է: Որքան մտորումներ ու հույզեր կան այս աշխատանքում... Կոմպոզիցիոն առումով, հեղինակը արհեստականորեն երկարացրել է աղջկա պարանոցը, գլուխը ուղղել փոքր- ինչ հետ ու մի կողքի թեքել: Այս ամենը ֆիգուրին հաղորդում է երազկոտություն և քնարականություն, իսկ սիմվոլիկ մոտեցումը արթնացնում է որոշ միստիկ ընկալում: Դիմագծերը լրացնում են այս ամենը. նշանաձև աչքեր, բարակ ու փոքր-ինչ երկարացված քիթ, սեղմված շրթունքներ, ու այս ամենը կարծես քողարկված, իբրև մազափունջ, ալիքանման մետաղյա երկար լարերի ներքո... Իսկական ռոմանտիկա, դեռատի աղջնակի պարզամիտ ու երկնասլաց վերապրումների վարդագույն մի աշխարհ: Նորարարական այս մտածելակերպը կարծես ինչ-որ տեղ դիտվում է որպես Դիլոյանի սեփական հայտ, սակայն հարկ է նշել, որ հեղինակը ուղղակի դարձավ մոդեռնիստական ուղղությունների կրող, և ինչը առավել գնահատելի է, ոչ թե անվերապահորեն կրկնող, այլ մնացող հարազատ թե սեփական, և թե ազգային մտածելակերպին:

«Աղջկա դիմաքանդակի» հարևանությամբ ցուցադրված է Դիլոյանի կերտած «Ընտանիք» կոմպոզիցիոն աշխատանքը: Ոճական առումով այս աշխատանքը կերպավորված է բավականին մոտ ու հարազատ է նախորդին՝ «Աղջկա դիմաքանդակ»-ին: Նրանցում մեծ ընդհանրություն է նկատվում՝ գլխի ձևերի ու վարսերի գանգրահերությունը շեշտող մետաղալարե խիտ մշակված եղանակներում: «Ընտանիք» կոմպոզիցիան՝ եռադիմաքանդակ է: Կոմպոզիցիան միավորում ու հավաքում է կենտրոնում գտնվող ֆիգուրը, որն իր սեփական չափսերով երկու անգամ գերազանցում է աջ ու ձախ կողային ֆիգուրներին: Ըստ երևույթին այդ գլխավոր կերպարը հանդիսանում է ընտանիքի մայրը, որն իր հովանու ներքո ապաստանել է իր երկու զավակներին: Այս մտքին ու կոմպոզիցիային իր ազդեցիկ նշանակությունն է լրացնում գլխավոր ֆիգուրի վարսերի դասավորվածությունը: էլեկտրազոդելով, քանդակագործը մի քանի տասնյակի հասնող համեմատաբար ավելի հաստ ու երկար ալիքանման մետաղալարեր, որոնք գլխավոր ֆիգուրի համար ծառայում են իբրև գանգրահեր վարսեր, այն ամբողջացնում, իսկ իբրև պարզված ձեռքեր, միավորում ընտանիքը, արտահայտում ընտանիքի ամուր կապն ու անբաժանելիությունը: Աշխատանքի ողջ կոմպոզիցիան գտնվում է մեկ միասնական ամբողջականության մեջ, որով հեղինակը ցանկացել է արտահայտել ընտանիքի, առավել ևս հայ ընտանիքի համերաշխ ու միասնական ամուր կապը:

Առանձին դիմագծերի մանրամասն մշակված չեն, ինչին քանդակագործը դիտավորյալ մեծ ուշադրություն չի դարձնում: Նախորդի համեմատ սրանք ավելի քիչ են մշակված ու դրանցում պակասում է հուզականությունը, որը ցույտուն էր «Աղջկա դիմաքանդակում»: Դիմագծերն այնքան պարզեցված ու ընդհանրացված են, որ նույնիսկ նշմարելի չեն ոչ աչքերը, հոնքերը և ոչ էլ շուրթերը: Այստեղ ուղղակիորեն էլիպսաձև դիմահարթակներին հայտնված է պարզաձև քիթ, որը նույնիսկ բացակայում է 3-րդ ֆիգուրում: Քանդակագործի համար էականն ու որոշիչը նման երկրորդական էլեմենտները չեն, այլ կայացող մեծ ընդհանրացմները ձևի ու ոճի, դեկորատիվության ու զգացած պատկերացումների մեջ, որոնք հնարավորություն են տալիս դիտողին կենտրոնանալու առաջնայինի և իմաստայինի վրա՝ ընտանեկան միասնության վրա:

Այս կոմպոզիցիայի վերնամասում գլխավոր ֆիգուրի գլխին կա մի շրջանաձև մետաղյա պսակ: Դա այն պսակն է, որը քանդակագործը նույնացրել է ավանդական լուսապսակին, որով իսկ կրկնակի շեշտել է ընտանիքի սրբագույն դերն ու նշանակությունը և առավելագույնս մեծարել ու սրբերի դասին վերագրել ընտանիքի մորը և մայրությունն ընդհանրապես: Այս կոմպոզիցիոն աշխատանքը Բ.Դիլոյանի հաջողված գործերից է և խիստ բնորոշ ու հատուկ է իր ոճին ու մտածողությանը:

Իր բնույթով փոքր–ինչ տարբերվում է նախորդ երկու աշխատանքներից մեկ այլ ստեղծագործություն, որը նույնպես գտնվում է թանգարանի ցուցասրահում: Ձևաստաղծմամբ ու բովանդակությամբ այս կոմպոզիցիան առանձնացվում է, քանզի այստեղ բացակայում է նախորդների համեմատ թեմատիկայի անվրդովությունն ու հանգստությունը: Սրանում միտքը բավականին անհանգիստ ու մարտահունչ է: Աշխատանքը նույնպես մետաղյա է, ուր դարձյալ կիրառված են էլեկտրաեռակցման հնարքներ:

Այն մեծ չէ (մոտ 1 մետրի սահմաններում): Արտաքին տեսքում կոմպոզիցիայում երևում է լայն բացված թևերով աղավնի, որը մեծ դժվարություններով փորձում է սլանալ դեպի վեր, սակայն խորն է նրա վիշտը, քանզի խաղաղասեր այդ թռչունը պարփակված է չարաբաստիկ կալանավայրերի փշալարե ծողերով (կոմպոզիցիան կառուցված է ռուսերեն այբուբենի թ-տառ սկզբունքով): Ցուցափեղկերում այս գործի անվանումը գրված չէ: Թանգարանի աշխատակցից տեղեկացանք, որ պետական հովանավորությամբ մի քանի տարի առաջ տեղի է ունեցել «կալանավորներ ու կալանավայրեր» թեմային վերաբերող քանդակագործների ստեղծագործությունների ցուցահանդես-մրցույթ, ուր հաղթող էր ճանաչվել Բ.Դիլոյանի այս կոմպոզիցիան: Թեև անձամբ հեղինակը չի վերնագրել, բայց դիտորդին հասկանալի ու ըմբռնելի է գործի բովանդա-

կությունը, որը դրսևորվում է աղավնու կերպարի միջնափակվածությամբ՝ բանտային այդ ահազդու ստրիբուտներով:

Մոտեցման իր եղանակով քանդակագործը աշխատանքին տվել է դեկորատիվ և ինչ-որ տեղ, սիմվոլիկ բնույթ: Սիմվոլիկան կոմպոզիցիայում մարմնավորվել է հատկապես աղավնու կերպարում, քանզի խաղաղությունը խորհրդանշող թռչունը ճեղքված է: Ճեղքը մատնանշում է խաղաղության, արդարության համար մաքառումների հոգու տրոփյունը, ուժասպառությունից սպառված ու արդարության տենչանքից ճեղքված...

Խորազնին ակնդրելով կհայտնաբերենք, որ այդ ճեղքը ունի խաչածև տեսք և, ավելին այն հրաշալիորեն իր ճշգրիտ սիլուետով պատկերում է խաչված Քրիստոսին: Իհարկե բառերով ասելը երբեք իզորու չէ փոխարինել բնօրինակին, այն անհրաժեշտ է ուղղակի տեսնել ու զգալ: Այս երևույթը ավելի արտահայտիչ և ազդեցիկ դարձնելու համար էքսպոզիցիայում աշխատանքը դասավորել են այնպես, որ այն հայտնվի պատուհանի լույսի տակ, և հակառակ կողմից դիտելու դեպքում ամեն ինչ լիարժեք , պարզ երևում է, հատկապես Քրիստոսի լուսապայծառ ուրվագիծը, որն էլ կազմում է այս աշխատանքի բովանդակությունն ու կոմպոզիցիայի առանցքը: Հիսուս Քրիստոսի՝ մարդկության Փրկչի գաղափարը այստեղ հույսի, հավատի ուժ է ներշնչում, որ նույնիսկ մարդու ամենադժվար իրավիճակում այն պետք է ուղեկցի և չթողնի մարի լույսը հանուն մարդկության արդարության ...

Ցուցասրահում աչքի են զարնվում Բ Դիլոյանի հեղինակած մի քանի դիմաքանդակներ: Սրանք մոտ 30-40սմ-ի հասնող ոչ խոշոր չափերի գործեր են, բոլորն էլ տարբեր իրենց բնույթով ու ոճով. ըրոշները ռեալիզմի կատարյալ արդյունք են, մյուսները դեկորատիվ ու սիմվոլիկ: Ռեալիստական նկրտումներով նրանցում աչքի են ընկնում հատկապես երկու աշխատանք՝ «Տղա» ու «Աղջիկ» գիպսե դիմաքանդակները, որոնք քանդակագործի հարազատ զավակներնի պորտրետներն են: Սրանք իրենց ձևերով պարզ ու մասամբ նատուրալիստական աշխատանքներ են: Այստեղ նրբությամբ են հաղորդված ծավալային ու տարածական համամասնությունները: Հատկապես նրբակերտ է «Աղջկա» դիմաքանդակը՝ իր ծավալայնությամբ ու համեստ դիմագծերով , որով շեշտվում է կանացիության հատուկ խոհեմությունն ու սքանչելիությունը:

Նույն ցուցասրահում գտնվում է մի հետաքրքիր դիմաքանդակային կոմպոզիցիա, որը քանդարանի կողմից վերանվանվել էր «Վիշտ», թեև աղոտ շշուկներ կային, թե իբր քանդակագործը նրանում պատկերել է Հովի. Թումանյանի հերոս՝ «Խելագար Սաթոյի» կերպարը: Շփոթմունքը ծնվում է այն բանից, որ քանդակագործը չի վերնագրել իր իսկ ստեղծած աշխատանքները և դրանից շատերի վերնագրերը առաջարկվել են արվեստագետների ու արվես-

տաբաանների կողմից: Գլխավորը, ստեղծագործության յիարժեք ավարտվածությունն ու ճշտությունն է, որից և ակամա կարող ես ենթադրել կոմպոզիցիայի թե՛ սյուժեն, և թե բովանդակությունը:

Կոնկրետ այս աշխատանքը՝«Վիշտը», դիտողին միանգամայն համակում է ահ ու սարսափով, վշտից խելագարված այս կերպարը կարծես ճչում է ամբողջ սրահով մեկ, տարածելով ցավագին զողանջներ: Քանդակում պատկերված է սիմվոլիկ մի դեմք , ձախ ձեռքով փակված գլխի մյուս կեսը: Ձեռքը թվում է թե կանացի է, թեև դիմաքանդակում դժվար կռահելի է, այն կին է, թե տղամարդ: Այդ իսկ պատճառով կասկածանքները հիմնավոր էին,թե այն «Խելագար Սաթոն» է: Հնարավոր է, և այն կին լինի: Դեմքը բավականին իռացիոնալ է՝ բնականոն հիմքից շեղված: Բերանը, անբնական բացված, աչքերը՝ աչքափոսերից դուրս նետված. կատարյալ սարսափելի մի պատկեր: Դիմաքանդակին բավականին լրացնում է ձեռքը, որը անբաժանելի, բաղկացուցիչ մասն է դարձել կոմպոզիցիայի, առանց որի դժվար թե այդ աշխատանքը դիտվեր իր լրիվ ավարտվածությամբ: Ձեռքը նույնպես սիմվոլիկ է, իռացիոնալ: Այն բնական ձևից երկարացված է, հոդային կոճերը ավելի ընդգծված, այնպես, որ ավելի ճիշտ այս ձեռքը հիշեցնում է ծեր կնոջ զառամած, հյուծված ձեռք,որն ավելի է արտացոլում մարդու հոգեկան ապրումների բուռն վշտահարությունը: Ի դեպ ասեմ, որ քանդակագործ Բ.Դիլոյանի աշխատանքներում հաճախակի են նմանատիպ ոգեշնչվածությամբ թեմաները: Գուցե դա գալիս է քանդակագործի անձնական ապրումներից, կյանքի հանդեպ իր ունեցած պատկերացումներից: Չէ որ եկան այն ժամանակները, երբ հայ ժողովուրդը ականատեսը եղավ 88-ի երկրաշարժի հետևանքներին, պատերազմին,բազմգթիվ զրկանքների, որոնք չէին կարող դուրս մնալ արվեստագետի՝ մեծ հումանիստի ընդարձակ, բայց միառժամանակ շատ փխրուն հոգու ուշադրության շրջանակից:Այս է վկայում նաև վարպետի մի այլ աշխատանք,որն իր վրա է կրում տառապանքի ու մոլեգին ցավի անմխիթար վիճակի կնիքը: Տառապանք,որն այս անգամ ավելի ահազդու ու սահմռկեցուցիչ է: Սա շատ ուշագրավ ու յուրահատուկ կոմպոզիցիա է, որն իրենից ներկայացնում է մի կնոջ ծնկաչոք ֆիգուր, ձեռքերը հառած դեպի երկինք: Կոմպոզիցիան բոլորաքանդակ է, նրանում հրաշալի արտահայտված է տարածաչափությունն ու ծավալայնությունը: Աշխատանքը որքան ռեալիստական հիմքերով է, այնքան էլ նկատելի են դեկորատիվ լուծումներ: Հետաքրքրությունը կառուցվածքային առումով կայանում է կոմպոզիցիայի ձևաստեղծման մեջ,թե ինչպես է քանդակագործը մեկ առ մեկ հավաքել ու միմյանց զոդել այդքան մետաղե «թափոնները»: Շատ բարդ ու աշխատատար գործ է ընթացել ֆիգուրի ձեռքերի և հատկապես դաստակի ու մատների վրա:Բավականին հուզիչ տեսարան է մեր առջև բացվում, երբ

տեսնում ենք վշտից մոլեգնած այս էակին: Հուզիչ տեսարանը բորբոքում է ֆիգուրի ծեռքերը, իր մատների դասավորվածությամբ: Դինամիկ ու շատ հետաքրքիր առանձին կոմպոզիցիա է ինքն իրենով այդ երկու ծեռքերը: Մի պահ այն հիշեցնում է դաշնակահարի վիրտուոզ ծեռքեր: Այն ուղղված է դեպի վեր՝ արմունկները ոչ լրիվ բացված, ծեռքի դաստակը փոքր-ինչ հետ ծալված և մատները միմյանց չկրկնող ու անկանոն թվացող շարժումների մեջ, որն ի սկզբանե մտածված էր վարպետի կողմից, անբաժանելի մասնիկը դարձնելու կոմպոզիցիայի, որով նա առավել ևս շեշտում ու բարձրացնում է վշտալից հուզականությունը իր աշխատանքի, ու կարծես, դեպի վեր հառնած ծեռքերով հերոսը ինչ-որ բան է ասում երկնքին, կամ գուցե ըմբոստանում, կամ ինչ –որ բան աղերսում... Իսկ դա գիտե միայն նրան արարողը...

Մեր հայացքը կոմպոզիցիայում անընդհատ ուղղվում է դեպի վեր: Դրան է նպաստում հերոսի գլխի տեղակայված ձևը, որն ուղղված է նույնպես դեպի վեր՝ երկինք: Այն զգալի է իր ծավալայնությամբ, անատոմիական ճշգրիտ կառուցումներով, սակայն առավել ընդհանրացված, այնքան ընդհանրացված, որ դիմագծերի փոխարեն դեմքին նշմարելի են մի քանի թվացյալ արտահայտչամիջոցներ: Նրանում չեն շեշտադրված աչքերը, հոնքերը, շրթունքները, այլ ուղղակի կա մեկ ընդհանուր դեմքի արտահայտություն, որը լի է մեծ անհանգստությամբ: Այստեղ մեծ հետաքրքրության տեղիք է տալիս պատկերված հերոսի մարմինը, որը ճեղքված է պարանոցից դեպի աջ ուսը: Սա պատահականություն չէ, և, իհարկե, այն դիտավորություն է քանդակագործի կողմից, նախապես ակնկալված, որ այն սրտի վերջին ճիգն է, որին այլևս ի զորու չէ մարդկային հոգին դիմակայելու, երբ մարդ արարածը անկարող է դառնում և հոգեպես և թե ֆիզիկապես մաքառելու բնության չարագույժ սպառնալիքի դեմ... Այն, ասես կրողն է անելանելի իրավիճակներում ժողովրդական այն խոսքի, թե «Կեսիցդ կես լինես»: Այսինքն որքան էլ տրտմես, վիշտ ու ցավ ապրես թեկուզ և կեսից էլ կիսվես, այնուհանդերձ պարզագույն մարդ ես, մարդ, որին ի վերուստ տրված է ուրախություն ու ցավ, տխրություն ու վիշտ, ինչպես նաև խինդ ու ծիծաղ, որը ցանկացած իրավիճակնորում էլ չպետք է կորցնի իր հուսո ճրագը, կյանքի հանդեպ ունեցած լավատեսությունը...

Ցուցասրահում ուշադրությանն արժանի է Բ.Դիլոյանի «Լռեցի Սաքոն» աշխատանքը՝ Հովհ. Թումանյանի պոեմի հերոսը: Ռելիեֆային այս ստեղծագործությունը նույնպես փոքրածավալ կոմպոզիցիա է, պատրաստված է գիպսից և երեսպատված բրոնզե փոշու քանձր շերտով: Այստեղ քանդակագործը զետեղել է միառժամանակ նույն թեմային հարող տարբեր սյուժեներ: Այսինքն՝ նունն հարթության վրա պատկերել պոեմի տարբեր հատվածներ նկարագրող իրադարձություններ: Կոմպոզիցիայի աջ կողմում պատկերված է

Սաքոյի արտասովոր կերպարը: Այստեղ հետաքրքիր զուգահեռներ են անցնում վերը մեկնաբանվող «Վիշտ» աշխատանքի հետ: Կա վարկած, որ նա նույն այս «Սաքոյի» նախատիպն է: Ինչու ոչ, հնարավոր է նաև այդպես ենթադրել, քանի որ բավականին ընդհանրություն կա այս երկու պատկերվող կերպարների միջև, ինչը երևում է գլխի դիրքի, դիմագծերի ձևաստեղծման և ձեռքի շարժման մեջ: Բայց և կա այն տարբերակիչ հատկանիշը, որը թույլ է տալիս նաև ենթադրել, որ դրանք տարբեր թեմայի ու բովանդակության աշխատանքներ են: Օրինակ՝ վշտահարի կերպարում նույնիսկ անհասկանալի է թվում հերոսի սեռը, բայց ավելի շատ ենթադրելի է, որ այն կին է, մանավանդ ծեր կին: Դա մեզ հուշում է նրա ձեռքերը, որը փակել է հայացքի ձախ կողմը: Իր պլաստիկական լուծումներով ձեռքը նրբագեղ է, բարակ երկար մատներով, չափազանց կանացի: Դիմագծերին էլ տրված չեն առնականություն արտահայտող խիստ հատկանիշներ, որով և նույնպես կարող ենք հիմնավորել մեր ենթադրությունը:

Յուրովի է լուծված թանգարանում ցուցադրվող Բ. Դիլոյանի «Բամբասանք» աշխատանքը՝ իրավիճակի ճշգրիտ, կոմիկականի հասնող բնութագրով: Այն բազմաֆիգուր կոմպոզիցիա է, ուր հեղինակը կարողացել է վերարտադրել բամբասող կանանց պատկերները, իրենց բնորոշ շարժուձևով և բնորոշ դիմագծերով : Իսկ ազնիվ արվեստագետի հայացքից ինչպես միշտ, չեն վրիպում նաև շրջապատի արատավոր երևույթները: Սակայն նրանցում էլ գտնվում են նոր ասելիքներ, հետաքրքրություններ, որ կարող է այնքան հուզել ու մի օր էլ դառնալ ստեղծագործման ներշնչանքի թեմա: Եվ իսկական արվեստագետի պարտքն է նաև գեղեցիկից բացի մերկացնելու կյանքի այլ դրսևորումները, մարդուն ի ցույց տալու իր իսկ արատները: Այս կոմպոզիցիան փոքրածավալ է, բայց ընդգրկում է կանացի մի աշխույժ հավաքախումբ: Իրենց հագուստներով կանայք ավելի հայեցի են, ու հեղինակը հենց ի նկատի է ունեցել հայ կանանց: Ֆիգուրները հետաքրքիր դասավորվածություն ունեն, հայացքները անվրեպ հառած ինչ-որ մի օբյեկտի: Կոմպոզիցիային քանդակագործը տվել է դեկորատիվ և սիմվոլիկ բնույթ:Օրինակ, նրանց դիմանկարագրին տվել է ընդհանրացված այն արտահայտությունը, որը խոսուն է աշխատանքի բուն սյուժեին՝ բամբասանքին, իսկ մարմնի կազմվածքները շեղել բնական իրավիճակներից և տվել համապատասխան դիրք ու շարժում, որը նույնպես խիստ նպաստում է պատկերվող սյուժեին:

Այսպիսով, շրջելով Վանաձորի Պետական թանգարանի սրահներով և ծանոթանալով Բորիս Դիլոյանի աշխատանքներին, կարող ենք եզրահանգել, որ գործ ունենք արդի ինքնատիպ ու հետաքրքիր մտածողությամբ օժտված մի արվեստագետի հետ, որն իր անջնջելի հետքն է թողել ոչ միայն Վանաձորի, այլ և XX դարի հայ քանդակագործության մեջ: